



## Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ

### ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2025-2026 ՈՒՍՏԱՐԻ, ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ  
ՆԵՐՔՈՒՀԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

#### 011401.33.6 «ԱՐՎԵՍՍ- ԱՐՀԵՍՍ»

Ուսուցումը երկաստիճան է՝ բակալավրիատ և մագիստրատուրա:

«Արվեստ- արհեստ» մասնագիտության շրջանավարտները ստանում են մանկավարժության բակալավրի որակավորում:

Բակալավրիատի ուսուցման տևողությունը չորս տարի է: Ծրագրի դիմորդը պետք է ունենա ընդհանուր միջնակարգ, նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության վկայական, նկարչական ունակություններ ու հմտություններ, արվեստի պատմության գիտելիքներ, որոնք համապատասխանում են ընդունելության քննությունների պահանջներին:

Դիմորդը պետք է հանձնի մասնագիտությունից երկու քննություն՝

«Արվեստի տեսություն» (գրավոր)

«Ընդհանուր արվեստի պատմություն» (բանավոր):

**«Ընդհանուր արվեստի պատմություն» (ԸԱՊ) բանավոր** - Մասնագիտական առաջին քննությունը կազմակերպվում է բանավոր քննության ընթացակարգով:

Մասնագիտական առաջին քննությանը ներկայացվող պահանջներն են, պարզել դիմորդի գիտելիքները արվեստի պատմության հիմնական ժամանակաշրջանների մասին. նախնադարյան արվեստ, հին աշխարհի արվեստ (Հին Եգիպտոս, Հռոմ, Միջագետք, Հունաստան), հելլենիստական ժամանակաշրջանի արվեստ, միջնադար, վերածննդի արվեստ, նոր դարաշրջանի արվեստ, նորագույն շրջանի արվեստ և իմացություն գեղարվեստական հոսանքների մասին:

**«Արվեստի տեսություն» (ԱՏ) գրավոր** - Մասնագիտական երկրորդ քննությունը կազմակերպվում է գրավոր քննության ընթացակարգով:

**«ԱՐՀԵՍՏ - ԱՐՎԵՍՏ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

**«Ընդհանուր արվեստի պատմություն» (ԸԱՊ) բանավոր**

Դիմորդի քննատոմսը պարունակում է ընդհանուր արվեստի պատմությանը վերաբերող չորս հարց՝ ըստ ներքոնշյալ գնահատման չափանիշների.

1. Պատկերացում արվեստի պատմության հիմնական փուլերի մասին, վերջիններիս բնութագրումը - 0-5 միավոր
2. Իմացություն հայ և համաշխարհային արվեստի նշանավոր դեմքերի մասին - 0-5 միավոր
3. Գիտելիքներ հայ միջնադարյան արվեստի մասին - 0-5 միավոր
4. Գիտելիքներ արվեստի ստեղծագործությունների մասին - 0-5 միավոր  
Ընդամենը՝ 20 միավոր

**«Արվեստի տեսություն» (ԱՏ) գրավոր**

Քննության ընթացքում ստուգվում են դիմորդի գիտելիքները արվեստի տեսությունից: Դիմորդները հրավիրվում են «Արվեստի տեսություն» գրավոր քննությանը: Հարցատոմսերը կազմված են 4-ական հարցից, որոնք գնահատվում են 0-5 միջակայքում, օրինակ՝

1. Արվեստի տեսակները - 0-5 միավոր
2. Արվեստի զարգացման հիմնական փուլերը - 0-5 միավոր
3. Կերպարվեստի ժանրերը, տեսակները - 0-5 միավոր
4. 19-20 -րդ դարերի արվեստի ուղղությունները - 0-5 միավոր  
Ընդամենը՝ 20 միավոր

Տեսությանը վերաբերող գրավոր քննության ժամանակ նախապես դիմորդներին բաժանվում են ծածկագրված թղթեր, որից հետո ծրարված հարցերից, վիճակահանությամբ, ըստ տարբերակների թվի, բացվում է մեկական ծրար, և ըստ տարբերակների՝ բաժանվում են դիմորդներին: Գրավոր քննությանը հատկացվում է 2,5 ակադեմիական ժամ :

Քննության ավարտից հետո գրավոր աշխատանքները ստուգվում են նույն օրը:

Ստուգված աշխատանքների գնահատականները փոխանցվում են քննական ամփոփաթեթի մեջ:

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## Հարցաշար

1. Որո՞նք են Կերպարվեստի տեսակները:
2. Նախնադարյան հասարակության արվեստը: Քարանձավային պատկերներ (Եվրոպա, Աֆրիկա):
3. Նախնադարյան մեզալիթյան հուշարձաններ: Սթոունհենջ:
4. Կերպարվեստի սկզբնավորումը Հայկական լեռնաշխարհում: Ժայռապատկերներ:
5. Նախնադարյան մեզալիթյան հուշարձանները հայկական լեռնաշխարհում: Քարահունջ:
6. Բրոնզեդարյա քանդակագործության նմուշները Հայկական լեռնաշխարհում: Վիշապներ, քարե կուռքեր:
7. Եգիպտական Վաղ և հին թագավորությունների արվեստը (մաստաբաներ, բուրգեր, սֆինքսներ):
8. Եգիպտական արվեստ: Որմնանկարչություն:
9. Ֆայումյան դիմանկարներ:
10. Իշտարի տաճարը Բաբելոնում:
11. Արարատյան թագավորության (Ուրարտու) արվեստը: Քաղաքաշինություն:
12. Որմնանկարչությունը Արարատյան թագավորությունում (Ուրարտու):
13. Հին հունական արվեստ: Տաճարաշինություն:
14. Հին հունական քանդակագործությունը: Միրոն, Ֆիդիաս, Պոլիկլետ:
15. Անտիկ հունական թատրոն: Ողբերգություններ և կատակերգություններ:
16. Հռոմեական արվեստ: Դիմաքանդակ:
17. Թատրոնը Հին Հռոմում: Կոլիզեոմ:
18. Հելլենիզմի շրջանի արվեստը: Պերգամոն:
19. Հայոց հեթանոս աստվածների պանթեոնը:
20. Հելլենիստական Հայաստանի արվեստը: Գառնիի տաճար:
21. Հելլենիստական Հայաստանի արվեստը: Արտաշատ քաղաքը:
22. Անահիտ և Աստղիկ Աստվածուհիների արձանները:
23. Հելլենիստական թատրոնը Հայաստանում:
24. Միջնադարյան արվեստ: Բյուզանդիա:
25. Միջնադարյան արվեստ: Սուրբ Սոֆիայի տաճարը:
26. Գոթական արվեստ: Փարիզի Աստվածամոր տաճարը:
27. Գոթական արվեստ: Ապակենկարչություն (վիտրաժ):
28. Միջնադարյան հայ թատրոնը:
29. Հայ գուսանա- աշուղական արվեստ: Նաղաշ Հովնաթան, Բաղդասար Դպիր:
30. Հայ գուսանա- աշուղական արվեստ: Սայաթ- Նովա:
31. Հայ ազգային պարատեսակներ: Գյուվնդ, Վերվերի, Քոչարի և այլն:
32. Հայ կոմպոզիտորներ: Ռոմանոս Մելիքյան, Առնո Բաբաջանյան:
33. Հայ հոգևոր երաժշտությունը: Շարականները:

34. Միջնադարյան հայ արվեստ: Ճարտարապետություն:
35. Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին: Մանուել:
36. Անիի Մայր տաճար: Տրդատ:
37. Միջնադարյան հայ արվեստ: Ձեռագիր մատյաններ:
38. Կիլիկյան մանրանկարչական դպրոց: Թորոս Ռոսլին:
39. Սարգիս Պիծակ:
40. Հայկական խաչքար: Նոր Ջուղա:
41. Հայկական խաչքար: Նորատու:
42. Միջնադարյան հայկական զարդարվեստը:
43. Միջնադարյան հայկական որմնանկարչությունը:
44. Ճարտարապետական կոթողների քանդակազարդումը: Զվարթնոց:
45. Ճարտարապետ, մանրանկարիչ և խաչքարի վարպետ Մոմիկը:
46. Վերածննդի իտալական արվեստը: Լեոնարդո դա Վինչի:
47. Վերածննդի իտալական արվեստը: Ռաֆայել Սանտի:
48. Վերածննդի իտալական արվեստը: Միքելանջելո Բուոնարոտի:
49. Թատրոնը Վերածննդի դարաշրջանում : Կոմեդիա դելլ'արտե:
50. Վերածննդի անգլիական թատրոն: Շեքսպիր:
51. Հոլանդական արվեստ: Ռեմբրանդտ վան Ռեյն:
52. Հակոբ Հովնաթանյանը և դիմանկարի ժանրը հայ կերպարվեստում:
53. Ստեփանոս Ներսիսյանը և կենցաղային ժանրը հայ արվեստում:
54. Հովհաննես Այվազովսկին և հայ ծովանկարիչները: Վարդան Մախոխյան, Արսեն Շաքանյան, Կարապետ (Շառլ) Ադամյան:
55. Հայկական բնանկարի հիմնադիր՝ Գևորգ Բաշինջաղյան:
56. Վարդգես Սուրենյանցը և պատմական ժանրը:
57. Իմպրեսիոնիզմ: Էդուար Մանե, Կլոդ Մոնե:
58. Իմպրեսիոնիզմ: Էդգար Դեգա, Օգյուստ Ռենուար:
59. Էքսպրեսիոնիզմ: Վինսենթ վան Գոգ:
60. Կուբիզմ: Պաբլո Պիկասո:
61. Կինոմատոգրաֆիայի առաջացումը: Էդվարդ Մելյերիջ:
62. Հայկական ֆիլմարտադրությունը: Համո Բեկնազարյան:
63. Դասական պար: Բալետ:
64. Սյուրռեալիզմը: Մալվադոր Դալի:
65. Կոլաժի արվեստը: Սերգեյ Փարաջանով:
66. Սերգեյ Փարաջանովի կինոարվեստը:
67. 19–րդ դ. վերջի և 20–րդ դ. սկզբի ռուսական արվեստը: «Միր իսկուստվա», «Բուբնովի վալետ» և այլն:
68. Կոմիտաս վարդապետի (Սողոմոն Սողոմոնյան) ժառանգությունը:
69. Իմպրեսիոնիզմի տարրերը հայ արվեստում: Եղիշե Թադևոսյան:
70. Ռեալիզմը հայ գեղանկարչության մեջ: Փանոս Թերլեմեզյան:
71. Մարտիրոս Սարյանը և սարյանական դպրոցը:
72. Տիգրան Զովհաճյանի օպերաները:
73. Արամ Խաչատրյանի բալետները:

74. Գեորգի Յակուլովը և նրա բեմանկարչությունը:
75. Գրքի նկարագարում: Հակոբ Կոջոյան:
76. Երվանդ Քոչար: Տարածությունը գեղանկարչության մեջ:
77. Միջուռքահայ նկարիչները: Արշիլ Գորկի:
78. Խորհրդային շրջանի հայկական կինոարվեստը:
79. Կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյան:
80. Ճարտարապետ Ալեքսանդր Սպենդիարյանը:

### **Առաջարկվող գրականության ցանկ**

1. Աղասյան Ա., Հակոբյան Հր., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ., Հայ արվեստի պատմություն, Զանգակ-97, Երևան, 2009
2. Առաքելյան Բ., Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976
3. Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. 9-6-րդ դարերում, Երևան, 2006
4. Ազարյան Լ., Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975
5. Դավթյան Ս., դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Երևան, 1985
6. Երզնկյան Մ., Արտասահմանյան արվեստի պատմություն, Երևան, 2003
7. Զաքյան Ա., Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության, Երևան, 1986
8. Մարտիկյան Ե., Հայ կերպարվեստի պատմություն, Երևան, գիրք Ա, 1971, գիրք Գ, 1983, գիրք Դ, 1987
9. Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը 17-18-րդ դդ գեղանկարչություն, Երևան, 1974
10. Матье М. Э., Искусство Древнего Египта, Л-М, 1960
11. Белявский В.А., Вавилон легендарный и Вавилон исторический, М, 1971
12. История искусства зарубежных стран в 3-х томах, М., 1962-1964
13. Бернсон Бернанд, Живописцы итальянского Возрождения, Б.С.Г.-Пресс, 2006